



Կարգապահական գործ թիվ ԿԳ-19179

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 303-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ-179/Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱԼԲԵՐՏ ԿԱՆԴԱԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Նելլի Հարությունյան, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի և Կարեն Մեծլումյանի կազմով,

Քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,
քննության առնելով փաստաբան Ալբերտ Կանդալյանի (արտոնագիր՝ թիվ 1446) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավոր Կարեն Զարիկյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ ՎԴ/1923/05/19 վարչական գործով հայցվորի ներկայացուցիչ փաստաբան Ալբերտ Կանդալյանը (**այսուհետ՝ նաև Պատասխանող**) 11.06.2019թ. ներկայացրել է բացարկի միջնորդություն, որում, բացի միջնորդության իրավական հիմնավորումներից, նշել է հետևյալը. «Պատրաստ եք նախկին իշխանության ներկայացուցիչների ապօրինի գործողությունները պաշտպանելու համար զրկել իմ վստահորդին իր իրավունքներից օգտվելու հնարավորությունից»:

Բացի այդ, ըստ Դիմողի՝ Պատասխանողը 10.07.2019թ. ներկայացրել է վերաքննիչ բողոք, որում, բացի իրավական հիմնավորումներից, նշել է հետևյալ արտահայտությունը. «Վարչական դատարանի վիճարկվող վճիռը կայացնելով՝ ուղղակի անտեսեց, որ նա պարտավոր էր բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված կայացնել որոշում և ոչ թե շահադիպական հիմնավորմամբ»:

Դիմողը գտել է, որ Պատասխանողն իր դատավարական իրավունքներն իրականացնելու շրջանակում իրեն մեղադրել է որպես դատավոր հանցավոր արարքներ կատարելու մեջ: Մինչդեռ, Պատասխանողի մեղադրանքներն ակնհայտ զրպարտություն

են, հակառակ դեպքում վերջինս պետք է իր պնդումները հիմնավորող տվյալները ներկայացնել քրեական հետապնդում իրականացնող մարմիններին: Դիմողը նաև գտել է, որ նման արտահայտություններն օբյեկտիվորեն նաև վիրավորական են անկախ և անաչառ մարդու համբավ ունեցող ցանկացած դատավորի համար:

Դիմողը գտել է, որ փաստաբաններն ու դատավորները՝ որպես իրավաբանի մասնագիտության առաջատար ներկայացուցիչներ, պետք է շփվեն բացառապես մասնագիտական բանավեճի տիրույթում՝ ներկայացնելով իրենց դիրքորոշումները միայն իրավական փաստարկների կանոններով, մինչդեռ, զրպարտության և վիրավորանքի հռետորաբանությունը, փաստաբանի կողմից դատավորի հանդեպ նման վարքագիծը միայն ստվերում են փաստաբանի մասնագիտական որակները և առաջին հերթին վնասում են փաստաբանական համայնքի բարձր պատիվը:

Դիմողը նշել է, որ դատավորին զրպարտելը ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեորեն պատժելի արարք է, սակայն, հաշվի առնելով, որ Պատասխանողը Դիմողի վարույթում քննվող գործերով առաջին անգամ է նման վարքագիծ դրսևորում, Դիմողի կարծիքով, Պալատն ի գորու է լուծել այդ հարցը՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության սահմաններում՝ կանխելով հետագայում նմանատիպ դրսևորումները:

2.Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի կողմից 19.08.2019թ. թիվ 351-Ա/ԿԳ-19179 որոշմամբ փաստաբան Ալբերտ Կանդայանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 2.2.2, 2.2.3 ենթակետերի և 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

23.08.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

2. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել: Պալատի խորհրդին նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Դիմողի դիմումի վերաբերյալ Պատասխանողին առաջարկվել է գրավոր բացատրություն ներկայացնել, որի առթիվ վերջինիս կողմից Պալատ է ներկայացվել բացատրություն, որում նշվել է հետևյալը:

Դիմողը, անհիմն եզրահանգմամբ և արագացված դատավարություն անցկացնելով, փաստացի զրկել է ՀՀ քաղաքացուն անաչառ և արդար դատարանում իր իրավունքների պաշտպանությունից օգտվելու հնարավորությունից: Ավելին՝ Դիմողը, չունենալով իր պարտականությունների կատարելու ցանկություն և դիտարկելով մեկանգամյա չներկայանալը որպես վարքագիծ և չհետազոտելով, թե ինչ

պատճառներից ելնելով հայցվորի ներկայացուցիչը չի ներկայացել դատարան՝ առնվազն զրկել է Պատասխանողի վստահորդին սահմանադրությամբ սահմանված իր իրավունքներից:

Եթե Դիմողը հայտնում է դիրքորոշում, որ եթե մարդը փորձում է իր իրավունքները պաշտպանել օրենքով սահմանված բոլոր հնարավոր մեթոդներով իշխանության ներկայացուցիչների ապօրինությունների դեմ, դա նշանակում է, որ ինքն ունի ինչ-որ միտում, դա արդեն խնդիր է:

Նման իրավիճակում ակնհայտ է, որ դատարանի կողմից առանց որևէ հիմնավորման՝ տվյալ գործն ամեն գնով փակելու փորձը Պատասխանողին իրավունք է տալիս դատարանի ինքնաբացարկ հայտնելու և դատարանի հանդեպ ողջամիտ կասկածներ ունենալու՝ նրա շահագրգռվածության մասով: Իսկ բոլոր ողջամիտ կասկածները, ի վերջո, վերածվում են համոզմունքի:

Դիմողի կողմից ամեն գնով փորձ է արվում զրկել հայցվորին ՀՀ Սահմանադրությամբ վերապահված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից, ինչպես նաև անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքից և անտեսվում է այն հանգամանքը, որ օտարվել են պատմամշակութային հողեր:

Ինչ վերաբերում է Դիմողի կողմից մատնանշված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածին, ապա դա Դիմողի կողմից ակնհայտ ճնշում է փաստաբանի վրա, որպեսզի վերջինս հրաժարվի վերաքննիչ բողոքից:

Մինչդեռ, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 3-րդ մասի՝ զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Փաստացի, եթե Դիմողը գտնում է, որ կողմն իրավունք չունի ողջամիտ կասկածներ և համոզմունք ունենալ և այն մատնանշել իր միջնորդության մեջ, որը հրապարակային չէ, ոչ միայն այն պատճառով, որ ներկայացվել է դատական վարույթի ընթացքում, այլ նաև այն պատճառով, որ Դիմողն ամեն ինչ արել է, որ չիրականացվի հրապարակային դատավարություն:

Դիմողի մոտեցմամբ, որևէ դատավորի հնարավոր չի լինի ներկայացնել ինքնաբացարկի միջնորդություն:

Պատասխանողի կողմից Դիմողին ներկայացվել է առաջարկ հայտնել ինքնաբացարկ և մատնանշվել է Պատասխանողի համոզմունքը Դիմողի շահագրգռվածության և անաչառության մասին:

Դիմողի կողմից զրպարտության մասին խոսելն առնվազն անհիմն է և ակնհայտորեն միտում ունի վարկաբեկել Պատասխանողին որպես փաստաբան:

Դիմողն ակնհայտորեն զրկում է փաստաբանին մասնագիտական բանավեճի տիրույթում ներկայացնել իր կարծիքը:

Դիմողի նման պահվածքը Պատասխանողի կողմից դիտարկվում է որպես նրա հանդեպ վստահությունը նվազեցնող վարքագծի դրսևորում:

Պատասխանողը ներկայացել է Խորհրդի նիստին և վերահաստատել է բացատրությամբ ներկայացրած իր դիրքորոշումը:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

23.10.2019թ. Նախապատրաստողը կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 28.10.2019 թ.-ին:

Պալատի խորհրդի նիստը տեղի է ունեցել 17.12.2019թ. ժամը 18:15-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Թիվ ՎԴ/1923/05/19 վարչական գործով հայցվորի ներկայացուցիչ է հանդիսանում Պատասխանող փաստաբան Ալբերտ Կանդայանը (Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությամբ, Դիմողի՝ դատավորի ինքնաբացարկի և վերաքննիչ բողոքի պատճեններով:),

- Պատասխանողը 11.06.2019թ. ներկայացրել է բացարկի միջնորդություն, որում նշել է հետևյալ արտահայտությունը. «Պատրաստ եք նախկին իշխանության ներկայացուցիչների ապօրինի գործողությունները պաշտպանելու համար զրկել իմ վստահորդին իր իրավունքներից օգտվելու հնարավորությունից:» (Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությամբ, Դիմողի՝ դատավորի ինքնաբացարկի միջնորդության պատճենով:),

- Պատասխանողը 10.07.2019թ. ներկայացրել է վերաքննիչ բողոք, որում նշել է հետևյալ արտահայտությունը. «Վարչական դատարանի վիճարկվող վճիռը կայացնելով՝ ուղղակի անտեսեց, որ նա պարտավոր էր բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված կայացնել որոշում և ոչ թե շահադիպական հիմնավորմամբ:» (Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությամբ, Դիմողի՝ վերաքննիչ բողոքի պատճենով:)

6. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Ալբերտ Կանդայանը փաստաբան է հանդիսանում 14.07.2012թ., և 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 19.08.2019թ. թիվ 351-Ա/ԿԳ-19179 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի կողմից 19.08.2019թ. թիվ 351-Ա/ԿԳ-19179 որոշմամբ փաստաբան Ալբերտ Կանդայանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն):

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային փորձունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ փորձունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Այս առումով կարևոր է հիշել, որ փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանի գործունեությունը, հետևաբար, նրա վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, այդ թվում՝ իրավաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես:

Փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծի դրսևորումից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել նրա՝ որպես իրավապապաշտպան գործառույթ իրականացնող իրավաբանի հեղինակությունը, ազնվությունն ու անձեռնմխելիությունը: Հակառակ պարագայում փաստաբանի ոչ բարեխիղճ վարքագիծը բացասական ազդեցություն է ունենում ինչպես այդ փաստաբանի, այնպես էլ փաստաբանության ինստիտուտի հանրային վարկանիշի վրա:

Փաստաբանի նշյալ պարտականությունը տարածվում է նաև դատարանում փաստաբանի վարքագծի նկատմամբ, որը պետք է համապատասխանի դատավարության կանոններին և հարգալից լինի դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Մասնավորապես, փաստաբանը պարտավոր է ենթարկվել դատավարական կանոններին՝ ներառյալ հարգանքով վերաբերվել դատարանին և դատավարության մյուս մասնակիցներին: Միևնույն ժամանակ փաստաբանի սույն պարտականությունը որևէ կերպ չպետք է կաշկանդի փաստաբանին իր վստահորդի շահերն անվախ պաշտպանելու հարցում՝ ընդհուպ մինչև հաշվի չառնելով սեփական շահերը կամ իր նկատմամբ ցանկացած հետևանք, որը կարող է ծագել նաև դատավորի գործողությունների հետևանքով: Այսինքն՝ փաստաբանը, դատարանում ներկայացնելով իր վստահորդի շահերը, պարտավոր է ապահովել ողջամիտ հավասարակշռություն իր մասնագիտական պարտականությունները ջանասիրաբար և բարեխղճորեն կատարելու և դատարանի ու դատավարության մասնակիցների նկատմամբ հարգալից վերաբերմունք ցուցաբերելու պարտականությունների միջև:

Շեղանաբար, պետք է տարանջատվի փաստաբանի օրինական և պատշաճ վարքագիծ դրսևորելու պարտականությունը փաստաբանի մասնագիտական և դատավարական անկախությունից, որը պետք է երաշխավորվի, և մասնավորապես, դատարանի նկատմամբ պատշաճ վերաբերմունք դրսևորելու պահանջը չպետք է մեկնաբանվի այնպես, որ խոչընդոտվի իր վստահորդի շահերն անկաշկանդ և անվախ ներկայացնելու փաստաբանի իրավունքը:

Ընդ որում, փաստաբանի սույն պարտականությունները և երաշխիքները տարածվում են նրա թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքի (կազմված դատավարական և այլ փաստաթղթերի) վրա:

Խորհուրդը գտնում է, որ գործի դատական քննության ընթացքում փաստաբանի սույն երկակի պարտականությունը բխում է փաստաբանի սոցիալական դերից և նշանակությունից և դրանով պայմանավորված՝ փաստաբանի պատասխանատվությունից մի կողմից վստահորդի առջև, իսկ մյուս կողմից՝ դատական իշխանության, որի գործառույթների պատշաճ իրականացմանը նպաստելուն է նպատակաուղղված փաստաբանի գործունեությունը: Փաստաբանը կարող է պատշաճորեն և արդյունավետորեն ներկայացնել և պաշտպանել իր վստահորդի շահերը միայն այն դեպքում, երբ ինքն ազատ է դատարանի, պետական այլ մարմինների և մասնավոր անձանց անօրինական և անհամաչափ ազդեցությունից: Միևնույն ժամանակ փաստաբանի սոցիալական կարգավիճակից բխում է նրա առաքելությունը նպաստել արդարադատության իրականացմանը, որը կարող է պատշաճ իրացվել, եթե փաստաբանը դատարանի և դատավարության մասնակիցների հետ հարաբերություններում գործի օրինականության և փաստաբանական էթիկայի շրջանակներում:

Պալատի խորհրդի նշյալ եզրահանգմանը համահունչ է նաև միջազգային պրակտիկան:

Եվրոպայում փաստաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների հոչակագրի (այսուհետ՝ նաև Հոչակագիր) «a» սկզբունքի համաձայն՝ իր վստահորդին խորհրդարարություն տրամադրելիս կամ վստահորդին ներկայացնելիս փաստաբանը պետք է լինի ազատ քաղաքականապես, տնտեսապես և մտավոր առումով: Դա նշանակում է, որ փաստաբանը պետք է անկախ լինի պետական կամ այլ ազդեցիկ շահերից...

Մասնավորապես, **Եվրոպայի փաստաբանների վարքագծի կանոնագրի (այսուհետ՝ նաև ԵՓՎԿ) 2.1.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանի բազմաթիվ պարտականություններ պայմանավորված են փաստաբանի բացարձակ անկախությամբ, ցանկացած ազդեցությունից ազատությամբ՝ հատկապես... արտաքին**

ճնշումից: Այդպիսի անկախությունը նույնչափ անհրաժեշտ է արդարադատության գործընթացի նկատմամբ վստահության համար, որքան դատավորի անկողմնակալությունը: Հետևաբար, փաստաբանը պետք է խուսափի իր անկախությանը որևէ խոչընդոտից և իր մասնագիտական չափորոշիչների ստորադասումից ...դատարանին... հաճոյանալու նպատակով:

ԵՓՎԿ-ի 2.1.2 ենթակետի համաձայն՝ սույն անկախությունն անհրաժեշտ է ոչ դատական և դատական գործերով: Փաստաբանի խորհրդատվությունն անարժեք է, եթե կատարվում է...՝ ի պատասխան արտաքին ճնշման:

Վերոնշյալ միջազգային իրավական ակտերում պետական կամ արտաքին ճնշման ներքո հասկացվում է նաև դատարանի հնարավոր ոչ իրավաչափ կամ անհամաչափ ազդեցությունը, որը կարող է սահմանափակել փաստաբանի անկախությունը դատարանում ներկայացուցչություն իրականացնելիս:

Բացի այդ, Պալատի խորհուրդը գտնում է, որ դատավարության ընթացքում դատարանի և փաստաբանի՝ որպես դատավարության տարբեր սուբյեկտների դիրքորոշումները կարող են չհամընկնել և առաջացնել հակասություն, որի հետևանքով փաստաբանն իր վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու ընթացքում կարող է հանդիպել դատարանի որոշակի հակազդեցության:

Այս տեսանկյունից և ելնելով փաստաբանի գործունեության երաշխիքներից՝ որևէ փաստաբանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու հարցը քննարկելիս փաստաբանը պետք է ունենա պաշտպանվածության բարձր իրավական շեմ:

Սույն պարագայում Դիմողը Պատասխանողին մեղադրում է դատավորի ինքնաբացարկի միջնորդության և վերաքննիչ բողոքում, համապատասխանաբար, ենթադրաբար ոչ պատշաճ հետևյալ արտահայտություններն օգտագործելու մեջ. «Պատրաստ եք նախկին իշխանության ներկայացուցիչների ապօրինի գործողությունները պաշտպանելու համար զրկել իմ վստահորդին իր իրավունքներից օգտվելու հնարավորությունից:», «Վարչական դատարանի վիճարկվող վճիռը կայացնելով՝ ուղղակի անտեսեց, որ նա պարտավոր էր բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված կայացնել որոշում և ոչ թե շահադիտական հիմնավորմամբ:»:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիրքորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ:

Ելնելով վերոգրյալից՝ Պալատի խորհուրդը հաշվի է առնում, որ դատավորի ինքնաբացարկի ինստիտուտը և, մասնավորապես, ինքնաբացարկի միջնորդությունը վերաբերում են դատավարության կողմի այնպիսի կասկածներին, որոնք առնչվում են դատավորի անաչառությանը խոչընդոտող հանգամանքներին, որոնց թվում են՝ դատավորի անձնական շահագրգռությունը գործի ելքով, տվյալ գործով դատավորի անկախությունը սահմանափակող ազդեցությունները և նմանատիպ այլ գործոններ: Հետևաբար, ինքնաբացարկի միջնորդության մեջ կողմի ներկայացուցիչ փաստաբանը, ելնելով իր վստահորդի լավագույն շահերից և իրացնելով իր վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու պարտականությունից բխող իր դատավարական իրավունքները, որոնք սահմանված են համապատասխան դատավարական օրենսգրքերով, ներկայացնում է իր վստահորդի դիրքորոշումը դատավորի ենթադրյալ սուբյեկտիվության կամ ոչ անկախ վարքագծի վերաբերյալ, որը

կարող է ներառել դատավորի մասնագիտական գործունեության և հատկանիշների վերաբերյալ գնահատողական դատողություններ և որակումներ, այդ թվում դատավորի ենթադրյալ արտաքին առնչությունների հետ կապված: Ընդ որում, փաստաբանի համար բացասական իրավական հետևանք չպետք է առաջացնի նշյալ դատողություններն անհիմն համարվելը կամ չհաստատվելը, քանի որ մրցակցային դատավարությունում կողմերը և նրանց ներկայացուցիչներն իրավական բանավեճի միջոցով պաշտպանում են իրենց սուբյեկտիվ դիրքորոշումները՝ ներառյալ դատարանի գործողությունների կամ անգործության վերաբերյալ: Դատավորի բացարկի իրավական հիմնավորումների նկատմամբ թույլատրելիության և հիմնավորվածության բարձր շեմի կիրառման պարագայում գործնականում էապես կսահմանափակվի նշյալ ինստիտուտի կիրառման շրջանակը և արդյունավետությունը, քանի որ դատավորի ինքնաբացարկի գրեթե յուրաքանչյուր միջնորդություն դատարանի կողմից կարող է դիտարկվել ոչ իրավաչափ և անընդունելի՝ ելնելով դատարանի գործունեությունից դժգոհ կողմի փաստաբանի կողմից հաստատապես դատարանի համար ոչ հաճելի ձևակերպումների առկայությունից:

Նշյալ հիմնավորումները վերաբերում են նաև Պատասխանողի վերաքննիչ բողոքին, քանի որ վերաքննիչ բողոքում ևս տեղ են գտնում կողմի դիրքորոշումն ու տեսակետը ստորադաս դատարանի գործողությունների կամ անգործության վերաբերյալ, որոնք նույնպես բնականորեն ունեն քննադատական և դատարանի գործունեության օրինականությունն ու հիմնավորվածությունը կասկածի տակ դնող բնույթ, որի միջոցով փաստաբանն իրականացնում է իր վստահորդի՝ ի վնաս իրեն կայացված դատական ակտերի բողոքարկման իրավունքը: Վերաքննիչ բողոքի բովանդակության նկատմամբ անհարկի սահմանափակումների կիրառումը ևս բացասաբար կազդի վերաքննության ինստիտուտի արդյունավետության և կիրառման պրակտիկայի վրա:

Փաստաբանի կողմից իրականացվող նշյալ դատավարական գործողությունների նկատմամբ ոչ իրավաչափ և անհամաչափ սահմանափակումների կիրառումն ուղղակիորեն կսահմանափակի փաստաբանի անկախությունը, ինչի հետևանքով կտուժի և՛ փաստաբանության հանրային հեղինակությունը, և՛ արդարադատության նկատմամբ հանրային վստահությունը:

Միևնույն ժամանակ փաստաբանի կարգապահական պատասխանատվությունը պետք է վրա հասնի, երբ փաստաբանի կողմից կիրառվում են ոչ թե դատավորի մասնագիտական և դատավարական գործունեությունը թեկուզև խստորեն քննադատող, այլ դատավորի անձը վիրավորող կամ նսեմացնող արտահայտություններ:

Տվյալ պարագայում Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից ներկայացված դատավորի ինքնաբացարկի միջնորդության մեջ և վերաքննիչ բողոքում տեղ գտած նշյալ արտահայտությունները պարունակում են որոշակի գործով դատավորի գործունեության քննադատություն և անիրավաչափության հիմնավորումներ, որոնք, սակայն, չեն վերաբերում դատավորի անձին, չեն վիրավորում նրա արժանապատվությունը, այլ միայն ուղղված են դատավորի մասնագիտական վարքագծի վիճարկմանը:

Հետևաբար, Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի վարքագծում Կանոնագրքի 2.2.3 ենթակետի և 4.1 կետի պահանջների խախտումը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի

39-րդ հոդվածի, 39.6-րդ, 39.8-րդ հոդվածների ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց '

1. Պալատի նախագահի 19.08.2019թ. թիվ 351-Ա/ԿԳ-19179 որոշմամբ փաստաբան Ալբերտ Կանդայանի (արտոնագիր՝ թիվ 1446) նկատմամբ Կանոնագիրքի 2.2.2, 2.2.3 ենթակետերի և 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:
2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Ալբերտ Կանդայանին և Դիմողին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստա.նալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Մելանյա Առուստամյան

17 դեկտեմբերի, 2019թ.
թիվ ԿԳ/179-Ա
ք. Երևան